Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2019/2 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

*ք. Սևան* *24.05.2019թ, ժ 15:00, ք. Սևան, Նաիրյան, 164*

*Մասնակցում էին*

*Հանձնաժողովի նախագահ՝* *Էդ. Ղազարյան – Սևանի քաղաքապետարանի ճարտարապետաշինարարական բաժնի պետ*

*Հանձնաժողովի անդամներ՝* *Մ.Մկրտչյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխ. մասնագետ*
*Զ. Հարությունյան – Սևանի քաղաքապետի օգնական*
*Է. Ղազարյան – Սևանի քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ*
*Մ. Ավետիսյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի առ. մասնագետ*

*Հանձնաժողովի քարտուղար՝* *Ա. Ավետիսյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ*

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2019/2 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների որոշման մասին

---

1. *Ընդունել ի գիտություն, որ՝*

1.1 Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 17.05.2019 թ հրավերը տեղադրվել է www.armeps.am էլեկտրոնային գնումների կայքում և հրապարակվել է www.gnumner.am կայքում::

---

1.2 Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի փողոցների ա/բ ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2019/2 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի անվանումը |
|---|---|
| *1* | ***"Արամ-Շին 2007" ՍՊԸ*** |

2. *Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.*

*- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան:*
*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

3. *Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

*- հայտ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին, հայտարարություն հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին, հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրի պատճենը, գնի առաջարկ: Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են:*

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- Մասնակցի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
- գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հայտը էլեկտրոնային եղանակով գնահատվեց բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Մասնակիցների առաջարկած գները՝

ՀՀ դրամ

| "Արամ-Շին 2007" ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Արժեքը | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Սևան համայնքի փողոցների ա/բ ծածկույթի փոսային նորոգման աշխատանքներ | 1667000 | 333400 | 2000400 |

թվաբանական սխալներ չկան

6. Գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտերից ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից "Արամ-Շին 2007" ՍՊԸ-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման, նիստը հրավիրել 2019թ. մայիսի 31-ին ժամը 15:00, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 18 սենյակ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Էդ. Ղազարյան

Անդամներ՝ _____ Մ. Մկրտչյան

_____ Մ. Ավետիսյան

_____ Հ. Հարությունյան

_____ Է. Ղազարյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան